



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
(+374 10) 55-25-37, orient@ysu.am, www.yasu.am

Արձանագրություն № 7

Արևելագիտության ֆակուլտետի գիտխորհրդի 2017թ փետրվարի 16-ի նիստի
Նիստին ներկա էին գիտխորհրդի 25 (քսանհինգ) անդամներից 14-ը:

Օրակարգում՝

1. Արևելագիտության ֆակուլտետի ՈԻԳԸ գիտական խորհրդատուի հարցը
2. Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի հայցորդ Զարուհի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի փոփխման հարցը
3. Արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի դոցենտ Ռուբեն Մելքոնյանի «Թուրքական գրականության պատմություն (20-րդ դարի 20-ականե-21-րդ դարի սկիզբ)» որպես բուհական դասագիրք հրատարակության երաշխավորելու և ՀՀ ԿԳՆ-ին որպես բուհական դասագիրք հաստատելու համար դիմելու հարցը:
4. Արևելագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, բ.գ.թ., դոցենտ Ռ. Մելքոնյանի և թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ., Ա. Մարտիրոսյանի «Թուրքերեն-հայերեն, հայերեն-թուրքերեն թարգմանությունների տեքստերի» ժողովածուն որպես ուսումնասովանողական ձեռնարկ հրատարակության երաշխավորելու հարցը:
5. Արտաֆակուլտետային ամբիոններին տրամադրվող դասաժամերի հարցը:
6. Մանկավարժական դասընթացների ընտրության կարգի ներկայացման և ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի ժամանակացույցով նախատեսված գործառույթների քննարկման հարցերը,
7. «Մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգ»-ի քննարկման հարցը:
8. Ամփոփիչ քննությունների հարցաշարի հաստատման հարցը:

Լ Ս Ե Յ Ի Ն Արևելագիտության ֆակուլտետի ՈԻԳԸ գիտական խորհրդատուի հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, արաբագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Հ. Քոչարյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – արևելագիտության ֆակուլտետի ՈԻԳԸ գիտական խորհրդատու նշանակել արևելագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ բ.գ.թ., դոցենտ Ռ. Մելքոնյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի հայցորդ Ջարուհի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի փոփխման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի ղեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, արաբագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Հ. Քոչարյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել իրանագիտության ամբիոնի հայցորդ Ջարուհի Խաչատրյանի «Ձիու անվանումները պարսկերենում և հայերենում. Համեմատական ուսումնասիրություն» թեկնածուական ատենախոսության թեման Ժ.02.02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Թ., դոցենտ Վ. Ոսկանյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն Արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի դոցենտ Ռուբեն Մելքոնյանի «Թուրքական գրականության պատմություն (20-րդ դարի 20-ականներ-21-րդ դարի սկիզբ)» որպես բուհական դասագիրք հրատարակության երաշխավորելու և ՀՀ ԿԳՆ-ին որպես բուհական դասագիրք հաստատելու համար դիմելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի ղեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, արաբագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Հ. Քոչարյանը, իրանագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Վ. Ոսկանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Երաշխավորել արևելագիտության ֆակուլտետի ղեկանի տեղակալ և թյուրքագիտության ամբիոնի դոցենտ Ռուբեն Մելքոնյանի «Թուրքական գրականության պատմությունը 20-րդ դարի 20-ականներից մինչև 21-րդ դարի սկիզբ» բուհական դասագիրքը հրատարակության, դասագրքի խմբագիր հաստատել ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ. պրոֆեսոր Ա. Սաֆարյանին, իսկ գրախոսներ՝ Բ.Գ.Թ. Լիլիթ Սաֆրաստյանին և Բ.Գ.Թ. Սիրանույշ Գալոնյանին և միջնորդել ԵՊՀ գիտխորհրդին թյուրքագիտության ամբիոնի դոցենտ Ռուբեն Մելքոնյանի «Թուրքական գրականության պատմություն (20-րդ դարի 20-ականներ-21-րդ դարի սկիզբ)» դասագիրքը ներկայացնելու ՀՀ ԿԳՆ-ին որպես բուհական դասագիրք հաստատելու համար:

Լ Ս Ե Ց Ի Ն Արևելագիտության ֆակուլտետի ղեկանի տեղակալ, Բ.Գ.Թ., դոցենտ Ռ. Մելքոնյանի և թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ, Բ.Գ.Թ., Ա. Մարտիրոսյանի «Թուրքերեն-հայերեն, հայերեն-թուրքերեն թարգմանությունների տեքստերի» ժողովածուն որպես ուսումնասօժանողակ ձեռնարկ հրատարակության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի ղեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, արաբագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Հ. Քոչարյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – երաշխավորել հրատարակության արևելագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, բ.գ.թ., դոցենտ Ռ. Մելքոնյանի և թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ., Ա. Մարտիրոսյանի «Թուրքերեն-հայերեն, հայերեն-թուրքերեն թարգմանությունների տեքստերի» ժողովածուն որպես ուսումնասովանական ձեռնարկ:

Լ Ս Ե Ց Ի Ն - Արտաֆակուլտետային ամբիոններին տրամադրվող դասաժամերի հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, արաբագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Հ. Քոչարյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – «Ընդհանուր լեզվաբանություն» դասընթացի փոխարինել «Լեզվաբանություն արևելագետների համար» դասընթացով և դասընթացի նկարագրի պատրաստումը հանձնարարել ֆակուլտետային մասնագիտական ամբիոններին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Մանկավարժական դասընթացների ընտրության կարգի ներկայացման և ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի ժամանակացույցով նախատեսված գործառույթների քննարկման հարցերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, արաբագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Հ. Քոչարյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – հանձնարարել առաջին կուրսի կուռատորներին ուսանողների տեղեկացնել Մանկավարժական դասընթացների ընտրության կարգի մասին, ինչպես նաև ի գիտություն ընդունել ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի ժամանակացույցով նախատեսված գործառույթների կատարումը:

Լ Ս Ե Ց Ի Ն - «Մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգ»-ի քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, արաբագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Հ. Քոչարյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – հաշվի առնելով «Ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ»-ի վերաբերյալ ֆակուլտետի գիտիտորիտի արված առաջարկումների նույնաբովանդակությունը և դրանց չարտացոլվելը վերոնշյալ կարգի վերջնական տարբերակում՝ ընդունել կարգը ի գիտություն:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամփոփիչ քննությունների հարցաշարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, արաբագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Հ. Քոչարյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել մբիոնների կողմից ներկայացված ամփոփիչ քննությունների հարցաշարը:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. ՄԵԼԻՔՅԱՆ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ՔՈՉԱՐՅԱՆ

Իսկականի հետ ձիշտ է՝

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Հ. ՔՈՉԱՐՅԱՆ